«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱԿՈՒՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Լուսակունք փ.1, շենք 112 փ/դ՝ 1609
+374 93 373092 Lusakunq@schools.am, lusakunq.schoolsite.am

N37/1
«05» սեպտեմբեր 2025թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լուսակունքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում աշխարհագրության (8 դասաժամ) և երաժշտության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթը կկայանա 2025թ. **սեպտեմբերի 23-ին** ժամը 14:00-ին:

Կից ներկայացվում է հայտարարության տեքստը:

Առդիր՝ « 1 » թերթ:

Հարգանքով՝

Դպրոցի տնօրենի պ/կ՝ Ahyo L. Հարությունյան

Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունքի մարզի «Լուսակունքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (8 դասաժամ) և երաժշտության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2025 թվականի սեպտեմբերի 05-ից մինչև սեպտեմբերի 18-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. սեպտեմբերի 23-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լուսակունքի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Լուսակունք, 1-փ, 2. 112: Տեղեկությունների համար զանգահարել (098) 32 87 60 հեռախոսահամարով: